ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30. 11. 2022 *ք. Իջևան*

Մասնակցում էին ֆակուլտետի գիտական խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների, ստուգարքների ժամանակացույցների հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. Հեռակա ուսուցման՝ 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցների հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
4. «Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-70-ական թվականներին» թեմայով ԵՊՀ ԻՄ-ի ներքին դրամաշնորհային ծրագրի կատարման ընթացքի մասին (զեկուցող՝ **Ա. Ազատյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի մասին ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը նշեց, որ ըստ հաստատված ժամանակացույցի՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի՝ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումներն ու քննությունները, ստուգարքներն անցկացվելու են 2022թ. դեկտեմբերի 22-29-ն ընկած ժամանակահատվածում: Նախապես կազմվել են բոլոր գրաֆիկները, դրանք ուղարկվել են մասնագիտական ամբիոններ՝ քննարկման և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների համար: Ժամանակացույցների շտկված տարբերակները այժմ ներկայացված են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ.Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների, ստուգարքների ժամանակացույցները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ դարձյալ զեկուցեց Կ. Պողոսյանը: Նա մասնավորապես նշեց, որ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանը, համաձայն հաստատված ժամանակացույցի, անցկացվելու է 2023 թ. հունվարի 4-24-ը: Քննաշրջանի ժամանակացույցն ամբիոններում քննարկվել և կատարված առաջարկությունների հիման վրա ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Վերափոխված տարբերակը ներկայացված է ֆակուլտետի գիտխորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի մասին զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ հեռակա ուսուցման՝ 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումները և քննությունները, ըստ գործող ժամանակացույցի, կիրականացվեն 2022 թ. դեկտեմբերի 13-24-ն ընկած ժամանակահատվածում: Կազմված գրաֆիկները քննարկման նպատակով ուղարկվել են ամբիոններ, դրանց մասին իրազեկվել են հեռակա

ուսուցման համակարգում դասավանդող դասախոսները և ֆակուլտետի հեռակա ուսուցման «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ու «Հոգեբանություն» կրթական ծրագրերով սովորող ուսանողները: Այդ գրաֆիկների փոփոխված տարբերակները ներկայացված են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ՈՐՈՇԵՅԻՆ.

Հաստատել հեռակա ուսուցման՝ 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցները:

ԼՍԵՅԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի մասին Ա. Ազատյանի զեկուցումից առաջ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, գիտխորհրդի նախագահ Կ. Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում իրականացվում են ներքին դրամաշնորհային ծրագրեր, որոնցից մեկը Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի կողմից ներկայացված «Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-70-ական թվականներին» թեմայով ԵՊՀ ԻՄ-ի ներքին դրամաշնորհային ծրագիրն է: Այնուհետև տիկին Պողոսյանը խոսքը փոխանցեց տվյալ դրամաշնորհային ծրագրի կատարման ընթացքի մասին զեկուցող, ծրագրի ղեկավար, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պ.գ.թ. Ա. Ազատյանին:

Ա. Ազատյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրել են Իջևանի խորհրդային առօրեկանության դրսևորումները, առանձնացրել աղբյուրագիտական բազան, կազմել առանձին ցանկեր, հատկապես մեծ նշանակություն են տվել խորհրդային շրջանում հրատարակված մամուլի և լուսանկարների ուսումնասիրությանը, մասնավորապես՝

- Դիտարկել են վերոնշյալ ժամանակաշրջանի ժողովրդագրական գործընթացների դինամիկան Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում՝ մասնավորապես՝ Իջևանում և շրջանում:

- Ցույց են տվել Իջևանի բնակչության սոցիալական կազմի առանձնահատկությունները և քաղաքաբնակների բաշխվածության բնույթն՝ ըստ սոցիալ-մասնագիտական խմբերի:

- Ուսումնասիրել են Իջևանի բնակչության նյութական ապահովության առանձնահատկությունները, ինչպես նաև քաղաքաբնակներին՝ կյանքի դժվարին պայմաններին հարմարեցնելու ուղիները:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ուսումնասիրության արդյունքում եկել են այն եզրահանգման, որ Իջևանի ժողովրդագրական պատկերը 1920-1930-ական թթ.-ին ունեցել է շեշտված առանձնահատկություններ, և ըստ յուրաքանչյուր մարդահամարի տվյալների՝ բնակչության թիվը նկատելի աճել է: Կարևորել են նաև այն հանգամանքը, որ 1930-ական թթ.-ի վերջին փոխվեց բնակավայրի էթնիկական պատկերը. այլէթնիկները սկսեցին կազմել բնակչության ավելի քանի 8 %-ը:

«Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-1970-ական թվականներին» թեմայով հետազոտական աշխատանքի առաջին եռամսյակի ուսումնասիրությունը հոդվածի տեսքով («Իջևանի ժողովրդագրական պատկերը 1920-30-ական թվականներին») ներկայացվել է տպագրության ԲՈԿ-ի կողմից երաշխավորված «Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու»-ի 2022 թ.-ի երկրորդ համարում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Ավագյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

«Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-70-ական թվականներին» թեմայով ԵՊՀ ԻՄ-ի ներքին դրամաշնորհային ծրագրի կատարման ընթացքի մասին զեկուցող Ա. Ազատյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և իրականացված աշխատանքները համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան